

որովհետեւ աշուղը աւելի քարոզիչ է քան բանաստեղծ։ Տաղերից բաւական թուով, մինչև նոր և նորագոյն աշուղների մեծապայն մասը (աեղ-տեղ 'ի բաց չառած և վերոյիշեալ աշուղները) պէտք է կարգութիւն այս կարգը։

Երրորդ կարգին պատկանողներն աւելի նորելուկներն են, մէկ էլ այն աշուղները, որոնք անշնորհը լինելուց ջոկ, թոյլ են վերաբերում գործին։ ոչ աշուղական արուեստը զիտեն, ոչ էլ ընդունակ են իրենց միտքը արտայայտելու։ Կարգում ես մի ամրող երգ, չը գիտես ինչ է ուղում ասել, ոչինչ չես հասկանում։ Աշըզութեան այդ անկումը ասած է զայխս նրանից, որ այժմեան սկզնակ ու ինքնակոչ աշուղները գործին շատ վայր ի վերոյ են նայում, մի քանի բասեր ու յանզեր սրանից-նրանից վերցնելով մի երգ են շնուռմ, կարծելով թէ ահա զարձան աշրդ Եփրինը։ Աշըզութիւնները մի ընդունակութիւն չունենալու հետ, չունեն և համեստութիւն ու համբերութիւն աշակերտելու, սովորելու, փորձուելու, չանչին սէր և եռանգ։ Ասենք դա մեզանում այժմ ընդհանուր ցաւ է։ Նոյնպիսի երեսյթը նկատում է մեր կեանքում ամեն տեղ։

§ 15 Որպէս երաժիշտ։ Ի՞նչ դրութեան մէջ է երաժշտական արուեստը՝ մուզիքը աշուղների մէջ։ Որոնել այդ պարզ, հասարակ մարդկանց մէջ մի կրթուած, կատարելագործուած նուազող, մի երեխի մասնագէտ—վիրառուօք—անմիտ բան կը լինէր, ինարկէ։ Երաժշտութեան արրական թէորիան (եւրոպական մշտաբով) չէ իմացել՝ և չի իմանում նրանցից ոչ ոք։ Չենք ճանաչում մի աշուղ՝ որ գոնէ քիչ ծանօթ լինի հայկական՝ էլ չէնք ստում եւրոպական ձախնագորութեանը։ Մի օտար մարդ նախ չէր հաւատաւ, յետոյ կը զարմանար. Ի՞նչպէս կարելի է մուզիքանս լինել տառանց նոտերի, այդ միննոյն է թէ զրագէտ կոչուել առանց առները ճանաչելու։ Եւ այդպէս էլ է. չը որ աշուղներից շատերը՝ հեղինակն շնորհալի բանաստեղծ են եղել առանց զիր ճանաչելու ի՞նչ է ուրիշն աշուղին երաժիշտ զարձնողը—այն, ինչ որ նախապատմական մարդուն էին զարձնում։ (աշուղը նմուշ է նախապատմական կեանքի). այդ զ ա ց մուն ք ը, լ ո ո դ ո ւ թ ի ւն ը և յ ի շ ո զ ու թ իւ ն են, Երաժշտական լսողութիւնն ու յիշողութիւն վերին աստիճանի զարգացած է լինում աշուղների՝ մանաւանդ կոյր աշուղների մէջ. իսկ զգացմունքը, մուզիքի այդ հոգին, ըզգացողականութիւնը, ծով է, անծայր ու անյատակ ծով այդ մարդկանց պարզ և մաքուր սրտում։

Ի՞նչ են արել միր աշուղները որպէս երաժիշտ։ Գողթան

երգիչները բնէւպէս են նուռագիլ իրենց քամրիոը¹⁾ շատ քիչ բան զիտենաց, լաւ էր տաել ոչինչ շրջիանձք. ուրեմն գանձ Միջին շրջանին Խաչատուր կեչարեցին այդ հայր աշուղը, ինչպէս պատմիչներն են ասում, հատաքրքրուել է հայ երաժշտութեան արտեստով։ «Այս սուրբ և առաքինի, և գիտութեամբ հոչակեալ մանաւանդ երաժշտական արուեսիւ»—գրում է Կիրակոս Գանձակեցին։ Նրա ասելով խաղը (ոկզինական ձայնանշանը) «Խորհուրդ խորին» հեղինակն է բերել Մեծ Հայաստանի կողմերը և պիրմասաշ իմաստուն երաժշտաց երգերը որ մոռացուեր կամ բոլորով վիճայլափոխուած էին։ գրել է նա ու շատերուն սովորեցրել²⁾։ Աշուղների մէջ այս միակ յայտնի անձնաւորութիւնն է ամբողջ միջնադարեան շրջանի մէջ երաժշտական գործի հնա կապ աշնացողը³⁾։

Սկսում է նոր Շրջանը. Նրա գլուխ կանգնած մեծ աշուղը՝ Սայեաթ-Նովին կարծես անցեալի լուռթիւնը կենդանացնելու համար միանգամից մկուսմ է նուռագիլ մի քանի գործիքներ. իսկ իւր մշատկան ընկեր ընդունում է «Ամեն սապի մէշըն գովածք քամանչն» ճիշտուածին. Սայեաթ-Նովին առանց քամանչի արդէն գժուար էր երեակայելը. Նա նրա ամենամօտ ընկերն, սիրելին էր։

«Թիգ ինձանից ով կանայ իւրի, աշուղի բան իս քամանչա»—ասում է նա: Ամեն աեղ երբ քամանչն Սայեաթ-Նովի հետն էր, կամ աւելի ճիշտ է ասել Սայեաթ-Նովին քամանչի հետ էր էկու մեծքուէր այժմնուան», գոզալները նրա շուրջն էին պտտում, նրա քաղցր նուռագածութիւնը լսելու, որ, երեսում է, լաւ տպառութիւն է թողել։

Շատ տիտուր սիրտ կու ինգացնիս, կու կորիս հիւանդի դուզն Եփ քաղցր ձայնդ վեր կօնիս, բաց կըլի հիտդ խօսողն—ասում է աշուղը։

Այնուհետև, մինչև նորագոյն շրջանի սկիզբը աշուղների մէջ երեւլի նուռագողներ եղել են Թիւրդ-Օղիկ Ղուկօն, Թեշիշ-Օղիկն (մեծը), Նիսային, Շիրբնը, Սարի-Օղանը, Բուռմանին, Բոլորն էլ ածել են սապ: Ղուկօն իւր արուեստը սովորեց ամբողջ Թիւրիթայում հոչակաւոր սապ ածող Միրզա-վաշի մօտ, որի նուռագերւ ժամանակ, ինչպէս աւանդաբար պատմում են հին աշուղները, ևթուշունները գալիս նոսում էին նրա սապի վրայ...» Թեշիշ-Օղիկն

¹⁾ Երաժշտական գործիքների մասին խօսելու ենց հետեւալ դիլում.

²⁾ Զարբանալ.

³⁾ Մեր յայտնի երաժշտագետ Կամիսա գորդողին հուռացեած է որ մինչ գորերում նայ վանքերում շատ են իշնի երաժշտական ոնլինք, ինչպէս և զյութիւն են սննեցնել երաժշտական գործոցներ։

այնքան վարժ էր մատների շարժուածքում, որ քանդել էր սազի աստիճանները (փարտա) ու այնպէս էր ածում նիտային զերբն աստիճանի տխուր, մելամազձիկ ու թափծալից նուագող էր, նա իւր երածշառութեան ազգեցութեամբ կարողացաւ մեղմացնել սուլթան Մանուպի բարկութիւնը, խաղալ նրա հոգու լարերի հետ և ազատել երգուածից կոստանդնուպօլիս տարուած մի խումբ հայ երիտասարդների, որոնց թւումն իր իւր որդին նսահակը (յեսոյ աշըր նուամայի): Շիրինը՝ այդ լեզուով ու ընութեամբ շիրին (քարզը) աշուզը՝ մի կրակ էր երածշտութեան մէջ, մի կատաղի, կրքու ու բողոքով նուազածու նա կոյր էր. արտաքին աշխարհը փակ էր նրա համար, իսկ ներքինը մեծ հրգէ-հով վառում էր. նա ուզում էր իւր բոլոր վիշտը, զայրոյթը, բոզքը սազի՝ այդ մնաբաւեստ ու մնկասար գործիքի վերայ արտայայտել: Թող խօսին ականատեսները. մնաք լունք.—Օրական մի քանի անգամ կարտառում էր նա սազի սիմերը—ասում են նրանք. ու ածելու ժամանակ այնքան ոգեսրում էր, այնքան բարձր էրստազի մէջ ընկնում, որ նստած տեղը (յատակին, ծալազատիկ) օրօրուելով, քշուելով առաջ էր զնում մի քանի քայլաչափ: Ներկայ եղան բարեկամները խառում էին նրան, դրկախանելով բերում տեղը նստեցնում ուր զարձեալ կրկնում էր նոյն բանը: Սարի-Օղլանը երաժիշտ մնազիք էր, ենիշերիների մնաւոր Արէ աղայի մօտ նա սովորել էր միաժամանակ ածել մի քանի գործիք—ձեռքերով սաղ, սաքերով սանթուր և բերանով փող կամ սանդր՝ թղթի ծաբքերում դրած, մղնակեաց երաժիշտ թուժմնին իւր ամրոցը մէրը սուել էր ոչ թէ սազի նսւազելուն՝ այլ սազին, անշանչ առարկային: Այնպէս զարգարուած էր նրա սազը ստղապիներով, քարերով, բուսակերով և յուլունքներով՝ որ սուա շը լինի ասելը, արժէր երկան ուկիւ հուատացնում են տեսնող աշուզները Իսկ երկան ուկին աշուզի համար, այն ժամանակները երբ քառասուն ձուն մի փարայշ արժէր՝ որքան մեծ փող էր: Այդ թանզագին սազը՝ որ այժմ ամեն մի թանզարանի համար գեղեցիկ զարդ կարող էր լինել, թազուել է տիրոջ հետ, այդ տարօրինակ աշուզի ցանկութեամբ:

Անցնենք նորագոյն Շրջանը: Նրա զլուխ կանգնած աշըր-Զիւանին երածշտութեան ահսակէտից Բնչ է ներկայացնում: Ոչ Սայեաթ-Նովի նման մի քանի գործիք է ածում, ոչ Ղուկասի, Նիտայու, և Շիրինի ճարապիկ, ցաւոտ, կրքու բնաւորութիւնն ունի, ոչ Սարի-Օղլանի ժանզերութիւնը և ոչ Ռումանու թանգ սազը: Նա ամենից առաջ, սազը՝ աշուզական այդ զարաւոր գործիքը վայր զրեց, վերցրեց ջութակը, աւելի կատարելազործուած ու բա-

բենշիւն սկրիպտան, վերածնելով ասիականից եւրոպականը. երկրորդ՝ ընդունելով այն թէ ժնշանաւոր աշուղ լինել» չի նշանակում թէ ժնշանաւոր նուագող լինել, վերցրեց գործի աւելի տեսական կողմը, երկրորդ տեղը տալով գործնականին: Նա հիմնովին ծանօթացաւ, ուսումնասիրեց արևելեան աշուղական եղանակները ու այդպիսով հանդիսացաւ մեզ համար հմտութէօրեարիկ քան սոլիստ-վիրտուոզ: Բացի այդ՝ նա ուսուցիչ-վարպետ է. դեռ 70-ական թուականներին Ալեքսանդրապոլում նա հայ-աշուղական-երաժշտական դպրոց ունէր, որտեղից գուրս եկած աշակերտները (մեծ մասամբ կոյր) այժմ յայտնի են այն կողմերում որպէս լաւ ածովներ՝ ինչպէս Համբարձում (Համբօ), Երուանդ, Անատօն (†), Խաչատուր, Գարեգին և այլք:

Զիւտնին վերաստեղծում է և հիւտում նորանոր եղանակներ, օգտում արևելեան մայր եղանակներից ու յարմարացնելով իւր երգերին, հայ աշուղին նոր նիւթ է տալիս երգելու: Նրա եղանակներից մի քանիսը չ'որ փափագով վասում եմ, «Այժեամը», «Բարի գեղեցիկը», «Թայրերիս մէջ» ձայնագրուել են եւրոպական նոտերով, որի ձայնագրողները, սակայն, նիկ. Ցիզրանեան, Կազաչնկանէրայցըել են որպէս սեփական գործ առանց յիշելու աղբիւրը: Մայրաքաղաքներում հայկական երեկոյթների ժամանակ նոյնպէս արւում են Զիւտնու երգ ու եղանակները, երբեմն յիշելով, երբեմն չը յիշելով հեղինակին:

Նոր, երիտասարդ աշուղների մէջ անպայման երաժշտական ընդունակութիւն ունի Ցայզենց Դրիգորը (թուան աշուղ Թիեամարտ, Հօրեգորորդի աշուղ Զամալու): Նա բացի այն՝ որ յայտնի թուածողի անուն է վայելում Շիրակի կողմերում, յօրինում է և ինքը նուրոյն եղանակներ, որոնցից ամենատարածուածն են «Երը ալեկութ ծովի վերայ» (խօսք. Թ. Թագէսսեանի), «Ճուր ձեռք, եղրայր» (խօսք նոյնի), «Ճամապարհ» ընկաւ Թիֆլիս, «Մի գեղեցիկ պատահեցաւ» (խօսք հեղինակի) և այլն:

Այժմ մնում է մեզ մի քանի հոսք ասել ու չափել երաժշտակութեան ունեցած զերը աշուղութեան մէջ,

Ու երբեցէ լսել է աշուղի երգ ու նուազածութիւնը (նոյն է բոլոր ազգերի մէջ) գիտէ որ այսուեղ երաժշտութիւնը միայն ձայնակցելու, ընկերակցելու (ակկօմպանիմենտ) համար է¹⁾: Աշուղը ամբողջ ժամանակ իւր մազերի հետ է, քան է պատրաստում ասելու և նուազում է համարեա ընազդման մէջ, Գուցէ ա-

¹⁾ Հայեակցելը աշուղների մէջ այն չէ ինչ որ առասործ հասկանում ենք ազգերնեշման. Երգելու ժամանակ իւրաք գովազն են ածելուց ու նորից սկսում են երգի մի տակը զեղացնելուց յետո մէջ ընդ մէջ:

ուղ լինի թէ ուրեմն աւելորդ է գործիքը. բայց ոչ. առանց նրան աշուղը կէս-մարդ է, առանց թէ թռուն է. Սազի ու ջութակի ընկերութիւնը նրա բերանը լեզու է զնում ու հոգու մէջ կրակւերաժշտեան օրօրող ձայնի տակ նրա մոռքերը հեշտ են զարում ու հեշտ էլ երգ չինում: Սովորութիւն է այդ, զարաւր սափարութիւն: Մինչև անգամ եթէ աշուղը զանում է մի այնպիսի տեղ, որ հետո չի լինում իւր սազը ու նրան խնդրում են մի անպատճառացից բան տակ՝ նա անպատճառ պէտք է ձեռնափայաց կամ մի այլ առարկայ սազի գիրքով ձեռքերի մէջ պահ է իրը ածէ, որպէս զի կարողանայ մի խսօս տակը: Այս բանը պարզ երեսէ է հին աշուղների ու նրանց հերքաթների մէջ:

§ 16 Որովէս երգիչ. Որպէս բանաստեղծ, որպէս երաժիշտ այսկայց յետոյ այժմ հայ աշուղնին նայենք որպէս երգիչ, նեղ մարտի որպէս երգու:

Դարձեալ հին շրջաններից ոչ մի բան յայտնի չէ մեզ, թէ թնջակս են երգել, օրինակ Գողթան երգիչները, կամ հին տաղասացները, ինչ զիազպացն ու ոյժ է ունեցել նրանց ձայնը և վերջապէս թնչ տեսակին ձայն է եղել այդ: Լաւ ձայն ունենալը, ի հարկէ, պատահական բան է, մարզու մասաւոր ընդունակութիւնների հետ կապ չունի, այնպէս որ դիցուք նշանաւոր աշուղը կարող է լաւ ձայն չունենալ, իսկ աննշանը, անշնորհքը—ընդհակառակը: Տաղասացների շրջանում եղել են անշուղը լաւ երգիչներ, լաւ ձայնաւորներ, չէ՞ որ նրանք մնեամասնութեամբ հոգմորականներ են եղել: Իսկ այն ժամանակները հոգմորական լինում էր առանապակ նաև, ով լաւ ձայն ունէր, ով լաւ տաղ ու շարական ասել զիտէր: Բայց ով կարող է մի որոշ բան տակ թէ նրանցից որը ինչ տեսակ ձայն է ունեցել կամ ինչպէս է երգել: Նայենք ուրեմն դարձեալ մեր նոր շրջանների երգը նշանաւոր աշուղներին:

Սայեաթ-Նովին լաւ ձայն է ունեցել: զեռ ջուշակ ժամանակը չիր մեքենայի առջև, հորում նստած՝ մաքուքի ձէնի վրայ տուաւոտեան հանած խաղն զեզզեկում է եղել զիշերն իւր քաղցր ձայնով իշխաններու բարձր ու լէն դարպանաւոմնէ—զբում է Ախովերգեան: Գիտենք որ նա իւր լաւ նուազածութեամբ ու ձայնով մոււրք է ունեցել վրաց արքունիքում: Ինքը աշուղն էլ իւր սիազը զնահատել է և լսել է տուել իւր սիրեկանին:

«Մազմամ մեռաւ Սայեաթ-Նովին՝ ականջդ խաղնին կարօտ է: Ինչպէս երգերը, այնպէս էլ նուազեին ու երգելը Սայեաթ-Նովի հուչակը բարձրացրել են իւր ժամանակին: Նա յայտնի է եղել աւելի որպէս լաւ սաղանդար:

Վերին առաջնանի լաւ ձայն է ունեցել: Շիրինը: «Լաւ ա-